

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՊՄԻ-ՈՒՄ
Լ. Ղուկասյան, Է. Զարգարյան, Գ. Ասատրյան
Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ



Զարգացումը և կրթությունը ոչ մի մարդու չեն կարող տրվել կամ հաղորդվել: Ամեն ոք, ով ցանկանում է դրանց հետ հաղորդակցվել, պետք է դրան հասնի սեփական գործունեությամբ, սեփական ուժերով, սեփական լարվածությամբ:

Ա. Դիստերվերգ

Կրթության ժողովրդավարացման հիմնահարցերի մեջ շեշտադրված է ուսուցման տարբեր ձևերի գործածության անհրաժեշտությունը: Էլեկտրոնային ուսուցումը, որպես ուսուցման կազմակերպման նոր ձև, որոշակի ռեսուրսների առկայություն է պահանջում: Էլեկտրոնային ուսուցման իրականացման ընթացքում առաջադրված են նաև մի շարք խնդիրներ, որոնք ընդգծված են հոդվածում և որոնց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել:

Առանցքային բառեր. կրթություն, ուսուցում, էլ. ուսուցում, կրթական համակարգ, ԷՈՒԱՑ, էլեկտրոնային դասընթաց:

Կրթական համակարգն իրականացնում է երկու կարևոր գործառույթ՝ պահպանման և զարգացման, որոնց միջոցով ամեն կերպ փորձ է արվում բավարարել հասարակության յուրաքանչյուր անդամի պահանջունությունները՝ անկախ նրա սեռից, տարիքից, ազգային և տարբեր սոցիալական խավերին պատկանելիությունից, նրա ունեցած կարգավիճակից: Սա կապվում է կրթության ժողովրդավարացման հիմնահարցերի հետ, որը ոչ միայն ենթադրում է սովորողների սոցիալական պաշտպանության իրականացում, այլ նաև ուսուցման բարձր որակի ապահովում, ուսուցման տարբեր ձևերի գործածություն: «Յուրաքանչյուր դիդակտիկական համակարգ կյանքի է կոչում նոր գործնական տեխնոլոգիա՝ ուսուցման տեսակ: Եվ քանի որ համակարգերից ոչ մեկը չի ժխտվում լիովին և աստիճանաբար կատարելագործվում է էվոլյուցիայի միջոցով, հետևաբար պատմական սովյալ ժամանակաշրջանում գործնականում կիրառվում են ուսուցման տարբեր տեսակներ» [1]: Ուսուցման տարբեր տեսակների զարգացումը պայմանավորված է նաև ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ նոր պայմանների, գործոնների, երևույթների և գործընթացների առկայությամբ:

Այսօր ուսուցման գործընթացում ուսանողները պատկերացում ունեն էլեկտրոնային գրադարանների, էլեկտրոնային դասագրքերի, դասախոսությունների, էլեկտրոնային դասընթացների մասին: Սրանցից առաջին երեքը բավական համատարած ու կիրառական են դարձել սովորողների մեծամասնության համար, որը և նպաստում է կրթական հաստատություններում էլեկտրոնային ուսուցման համակարգի ներդրմանը:

Էլեկտրոնային ուսուցումը հիմնականում կարելի է առաջարկել հեռակա կրթության համակարգում, սակայն այդպիսի դասընթացներ առաջարկվում են նաև առկա կրթության համակարգում սովորողների համար: Ակնհայտ է, որ ուսուցման ոչ մի տեսակ սովորողների համար չի կարող կատարյալ լինել, ուստի կան որոշ սահմանափակումներ և խնդիրներ, որոնք անընդհատ պետք է վերանայվեն և ստանան լուծումներ:

2013 թ. սկսած Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտն էլեկտրոնային ուսուցման ազգային ցանցի (ԷՈՒԱՑ) աջակցությամբ

ԷՈՒԱՑ © Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ընդգրկվեց էլ. ուսուցման ազգային գործընթացներում, որի արդյունքում բուհում մշակվեց, փորձարկվեց և ներդրվեց մեկ դասընթաց: Այս գործընթացի շարունակական գնահատումները թույլ են տալիս խոսել նաև էլ. ուսուցման ներդրման գործընթացում հետևյալ ռեսուրսների առկայության անհրաժեշտության մասին. գիտելիքներ (էլ. միջավայրում կողմնորոշվելու, մեթոդների կիրառման), մարդկային ռեսուրսներ, հարթակ, ինտերնետ հզորություն, օրենսդրական հենք (որոշում, կանոնակարգ), համագործակցություններ, էլ. ուսուցման մշակույթ:

Թեև սրանք ներկայացվել են ԷՈՒԱՑ-ին, ցանցը նշվածներին հնարավորինս աջակցում է, սակայն որոշակի բուհում էլ. ուսուցման ներդրումը հաճախ մասնակի և ամբողջական աջակցության կարիք ունի: Այս ուս. տարում փորձում ենք մշակել էլեկտրոնային նոր դասընթաց, միևնույն ժամանակ մշակել այդ դասընթացի անցկացման ընթացակարգն առկա ուսուցման համակարգում սովորողների համար:

Էլ. ուսուցման իրականացման ընթացքում առաջադրվում են նաև մի խումբ այլ խնդիրներ, որոնք ևս համակ ուշադրության են արժանի.

- ✚ անկախ աշխարհագրական պայմաններից և տեխնիկական հնարավորություններից՝ ուսուցման հասանելիության ապահովում,
- ✚ մատչելի և գիտական էլեկտրոնային բովանդակության ապահովում սովորողների շրջանում (դասագրքեր, էլ. ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ, խաղվարժանքներ, գիտելիքը գնահատող էլ. ծրագրեր),
- ✚ ինքնակրթության մշակույթի ձևավորում, որը նշանակում է նաև ինքնուրույն սովորել, տարբեր հարցերի շուրջ ինքնուրույն մտածել և պատասխանատվություն կրել իր ուսման համար,
- ✚ էլեկտրոնային դասընթացի արդյունքում սովորողների ձեռքբերած գիտելիքների գնահատման մեխանիզմների հստակեցում. առաջադրանքներ, մշակումներ, օրինակներ, ինտերակտիվ թեստեր, որոնք էական են սվյալ դասընթացի յուրացման համար, հետաքրքիր և հաճելի են կատարողին:

Ոչ պակաս կարևոր է այն, որ ուսանողներն իրենք ընտրեն, թե ինչպես են ուսուցանվելու: Այս առումով առկա համակարգում սովորողներին կարելի է առաջարկել նաև ուսուցման իրականացման ընդունված ձևերը՝ ընտրությունը թողնելով ուսուցանվողին: Պետք է հստակեցնել նաև էլ. ուսուցումն իրականացնողների ծանրաբեռնվածության կարգը և այլն:

Իհարկե, կան նաև այլ հիմնահարցեր, որոնց պետք է ուշադրություն դարձնել, սակայն դրանք կառանձնացվեն էլ. ուսուցման կիրառման և պարբերաբար կատարվող մշտադիտարկումների անցկացման արդյունքում [2]:

Կարծում ենք, որ մոտ ապագայում մեր երկրում ևս կգործի Հեռակա Համալսարան, ինչպես Հագենի հեռակա համալսարանը Գերմանիայում (ստեղծվել է 1974թ.), որտեղ, հաստատություն չհաճախելով, կսովորեն հազարավոր ուսանողներ:

Գրականության ցանկ

1. Ղույունյան Գ. Ե. Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I. Երևան., Զանգակ-97, 2005.- 464 էջ:

2. Փոխակերպվող Հասարակություն 1,2/02 Հեռաուսուցումը Հայաստանում. գլխ. խմբ. Լյ. Հարությունյան, խմբ. Խորհուրդ՝ Բրայան Քերնի, Էնդրյու Քորնվել, Նորին Քերնի, Փեմ Շեքսպիր